

Քվոտայով գործարքների իրականացման տեղեկատվական ամփոփագիր

09.02.2017թ.

Քվոտայի սահմանում

Հաշվարկային քարտի վարկային սահմանաչափի շրջանակներում 0% դրույքաչափով և համապատասխան հաշվարկային քարտի համար սահմանված ժամանակացույցի համաձայն մարման պայմանով գումարի օգտագործման հնարավորություն, որը տրամադրվում է Բանկի հետ համագործակցող կազմակերպությունից POS-տերմինալի միջոցով գնում կատարելիս:

Քվոտայով գործարք հնարավոր է կատարել միայն հաշվարկային (վերականգնվող վարկային սահմանաչափ ունեցող) քարտերով՝ բացառությամբ VISA Business, ինչպես նաև հավելյալ և կից քարտերի

| | |
|------------------------------------|---|
| Քվոտայի գործողության ժամկետ | 12 ամիս |
| Արժույթ | ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո (համապատասխանում է քարտի արժույթին) |
| Տարեկան տոկոսադրույք | 0% |
| Մարման հաճախականություն | Ամսական |

Քվոտայի տրամադրման պայմաններ

1. Քվոտան կարող է տրամադրվել մինչև 12 ամիս մարման ժամկետով, որը կարող է գերազանցել հաշվարկային քարտի վարկային սահմանաչափի գործողության ժամկետը
2. Քվոտան տրամադրվում է ամսական հավասարաչափ մարման պայմանով
3. Քվոտայի մարման ժամանակացույցը սահմանվում է գործող օվերդրաֆտի ժամանակացույցին համապատասխան՝ ամսական մարման օր է սահմանվում գործող օվերդրաֆտի ժամանակացույցի ժամանակահատվածների վերջնաժամկետը, ընդ որում.
 - արտոնյալ ժամանակահատվածով օվերդրաֆտի դեպքում քվոտայի ամսական մարման ժամկետ է սահմանվում տվյալ օվերդրաֆտի համար սահմանված արտոնյալ 15-օրյա ժամանակահատվածի վերջնաժամկետը,
 - առանց արտոնյալ ժամանակահատվածի օվերդրաֆտի դեպքում որպես քվոտայի ամսական մարման վերջնաժամկետ սահմանվում է տվյալ օվերդրաֆտի տոկոսագումարների մարման համար սահմանված նույն մարման օրը
4. Քվոտան ձևակերպվում է գործող վարկային սահմանաչափի (օվերդրաֆտի) սահմաններում, այսինքն՝ քվոտայի գումարը չի կարող գերազանցել գործարքը կատարելու պահին օվերդրաֆտի չօգտագործված (օգտագործման համար հասանելի) մասի մնացորդը
5. Քվոտայի օգտագործման արդյունքում քարտապանի վարկային սահմանաչափը (օվերդրաֆտի գումարը) նվազեցվում է քվոտայի գումարի չափով

- 6 Զվոտայի գծով մարում իրականացնելու դեպքում կատարվում է գործող վարկային սահմանաչափի ավելացում՝ մարվող գումարի չափով: Արդյունքում քվոտայի ձևակերպման պահին ձևավորվող՝ հաշվարկային քարտի գծով ընդհանուր վարկային պարտավորության գումարը մնում է անփոփոխ քվոտայի գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում
- 7 Հաճախորդի հաշվարկային քարտին առկա սեփական միջոցների առկայության դեպքում նույնիսկ քվոտան կարող է ձևակերպվել առկա՝ օվերդրաֆտի միջոցների սահմաններում
- 8 Զվոտայի վճարման գծով 5 օր ուշացում թույլ տալու դեպքում քվոտան դառնում է վճարման ենթակա՝ տվյալ պահին առկա քվոտայի մնացորդի ամբողջ գումարի չափով, ինչի հետևանքով քվոտան դադարում է գործել, իսկ վերջինիս մնացորդի գումարը վերականգնվում է համապատասխան հաշվարկային քարտի վարկային սահմանաչափի ներքո
- 9 Գրավով ապահովված օվերդրաֆտների դեպքում գրավից ազատումը կատարվում է քվոտայի գումարի ամբողջական մարման դեպքում միայն
- 10 Զվոտայի մարումներն իրականացվում են բացառապես համապատասխան օվերդրաֆտի քարտային հաշվին գումարի մուտքագրման միջոցով

Քվոտայով գործարքը կատարվում է POS տերմինալի գտնվելու վայրում քարտապանի կողմից: Քարտապանի անձը հաստատող փաստաթղթի առկայությունը պարտադիր է:

Ուշադրություն

Քարտի արժույթից տարբերվող արժույթով գործարքներ

Քարտային հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործառնության/գործարքի հավաստագրման պահին գործառնության/գործարքի հավաստագրման և փաստացի հաշվեգրման ժամանակ կիրառվող փոխարժեքները կարող են տարբերվել: Հավաստագրման ժամանակ կիրառվում են ԱրՔա/VISA/MasterCard վճարահաշվարկային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքները, իսկ գործառնության/գործարքի հաշվեգրման ժամանակ կիրառվում է Բանկի կողմից գործառնության/գործարքի հաշվեգրման օրվանը նախորդող բանկային օրվա ավարտի համար սահմանված ԱՄՆ դոլարի փոխարժեքը: Բացառություն են կազմում VISA վճարահաշվարկային համակարգի քարտերով Եվրոյով կատարված գործառնությունները/գործարքները, որոնց հաշվեգրման ժամանակ կիրառվում է Բանկի կողմից գործառնության/գործարքի հաշվեգրման օրվանը նախորդող բանկային օրվա ավարտի համար սահմանված Եվրոյի փոխարժեքը: Փոխարժեքների տարբերության հետ կապված արժույթային և այլ ռիսկերի համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

Քարտային հաշիվը տնօրինելու իրավունք

Քարտային հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաճախորդի իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կամ օրենքով սահմանված կարգով այլ իրավասու մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:

Առանց հաճախորդի կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Դրանք արտացոլվում են հաճախորդի բանկային հաշիվների քաղվածքներում, որոնք Բանկի և հաճախորդի միջև համաձայնեցված կարգով տրամադրվում են հաճախորդին:

Հեռահար կապի միջոցներ

Բանկի ծառայությունները մատուցվում են նաև հեռահար կապի միջոցներով, որոնց պայմանները ներկայացված են հետևյալ հղումներով՝

Converse Առցանց Բանկ - <https://conversebank.am/hy/internet-banking/>

mConverse մոբայլ բանկ - <https://conversebank.am/hy/mconverse/>

Իմ Կոնվերս - <https://conversebank.am/hy/my-converse/>

SMS – Converse - <https://conversebank.am/hy/sms-converse/>

Քարտի կորստի/գողացվելու դեպքում

Քարտի կորստի /գողացվելու դեպքում այն արգելափակելու համար հարկավոր է անմիջապես հայտնել այդ մասին՝ հետևյալ եղանակներից ցանկացածով.

1. զանգահարելով Քարտի վրա նշված հեռախոսահամարով,
2. զանգահարելով Բանկ՝ ներքոնշյալ հեռախոսահամարներով.
 - ✓ ժամը 9:00-22:00՝ **(+37410) 511-210, 511-211**
 - ✓ շուրջօրյա՝ **(+37410) 545-514**

Բանավոր դիմումի ստացումից և Քարտապանի ինքնուրույնը ճշտելուց հետո Քարտն արգելափակվում է:

3. Բանկի ոչ աշխատանքային օրերին և ժամերին՝ զանգահարելով «Արմենիան Քարդ» ՓԲԸ՝ **(+37410) 592-222** հեռախոսահամարով:
4. ուղարկելով համապատասխան գրավոր հաղորդագրություն card@conversebank.am էլ. հասցեով կամ **(+37410) 511-212** ֆաքսով
5. ներկայացնելով գրավոր դիմում Բանկի ցանկացած մասնաճյուղ:

Արգելափակումից հետո Քարտը հայտնաբերելու դեպքում Քարտապանը պարտավոր է այդ մասին ամենաուշը 1 բանկային օրվա ընթացքում տեղեկացնել Բանկին:

Գործարքի բողոքարկում

Քաղվածքում գործարքի հաշվեգրման պահից 60 օրացուցային օրվա ընթացքում Քարտապանը կարող է Բանկ ներկայացնել գործարքի բողոքարկման հայտ: Նշված ժամկետից ուշ ներկայացված հայտերը կարող են չդիտարկվել Բանկի կողմից: Գործարքի բողոքարկման համար հարկավոր է պահպանել գործարքի հետ կապված բոլոր փաստաթղթերը:

Հայտը հասանելի է Բանկում, ինչպես նաև՝ հետևյալ հղումով.

<https://conversebank.am/hy/all-forms/>

Կապ Բանկի հետ

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի <https://www.conversebank.am> ինտերնետային կայք
- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել **(+374 10) 511 211** հեռախոսահամարով
- Viber ՝ **+374 95 511 211**
- Skype ՝ **conversebank-callcenter**

Ծանուցում Ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից Ձեզ մատուցվող ծառայությունների հետ կապված տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Հասցե՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Մ. Խորենացու փող., 15

«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ

Էլ. փոստ՝ info@fsm.am Հեռախոս՝ (+37460) 70-11-11

Ֆաքս՝ (+37410) 58-24-21